

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶՈՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

25.12.2014

Գեղարքունիքի մարզից 2013-14թվականների ընթացքում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ մարտական դիրքերում զոհված Վերին Գետաշենից Լյուքս Ստեփանյանի, Ծովինարից Սարգիս Աբրահամյանի, Գեղիովիտից Գարիկ Իսպիրյանի, Ավազանից Արտակ Բեգյանի, Նորատուսից Արմեն Ավետիսյանի եւ Գավառի Արծվաքար թաղամասից զորակոչված Գեորգի Մնացականյանի ընտանիքներին Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի որոշմամբ հատկացվեց դրամական աջակցություն: